Լույսեր, տեսախցիկ, **Ծառայություն**

Տանը լինելը նրանց չխանգարեց ծառայել:

Սանդրա Էդվարդս
(Հիմնված է իրական պատմության վրա)

Անտոնելան և Մարիանան սիրում էին եկեղեցի հաճախել ամեն շաբաթ: Երկուսն էլ գիտեին, որ չէին կարող եկեղեցի գնալ COVID-19 համավարակի պատճառով: Նրանք առցանց մասնակցում էին Երեխաների միության դասին, սակայն դա պարզապես նույնը չէր:

Անտոնելան և Մարիանան կարոտում էին Երեխաների միությունը: Մի տարի առաջ նրանց ընտանիքը Չիլիից տեղափոխվեց Կանադա: Համավարակի ժամանակ դժվար էր գտնել նոր ընկերներ: Նրանք կարոտում էին այն դասերը, երբ ուրիշ երեխաների հետ սովորում էին սուրբ գրությունների պատմություններ: Նրանք կարոտում էին նաև իսպաներեն դասերը, որոնց մասնակցում էին Չիլիում:

Մի օր, եկեղեցու ժողովին տանից մասնակցելուց հետո, Անտոնելան և Մարիանան առցանց փնտրում էին մի բան, որը կօգներ իրենց ուսումնասիրել *Եկ, հետևիր Ինձ* ծրագիրը:

«Ես կցանկանայի, որ մենք կարողանայինք ավելի շատ տեսանյութեր գտնել իսպաներենով», - ասաց Անտոնելան: Նա մի պահ մտածեց: Ապա նրա մոտ մի հրաշալի միտք ծագեց: «Մենք կարող ենք ամեն շաբաթ մեր սեփական տեսանյութերը նկարել *Եկ, հետևիր ինձ* ծրագրի համար»:

«Այո, և մենք կարող ենք նկարել դրանք իսպաներենով», - ասաց Մարիանան: «Ապա մենք կարող ենք դրանցով կիսվել այլ երեխաների հետ»:

Mamá and Papá (մայրիկն ու հայրիկը) ասացին, որ կարող էին օգնել նրանց: Ողջ ընտանիքը ոգևորված էր:

Նախ ընտանիքը կարդաց շաբաթվա դասի համար նախատեսված սուրբ գրությունները: Աղջիկները ծրագրեցին, թե ինչի մասին էին խոսելու: Ապա նրանք սկսեցին նկարահանել տեսանյութերը: Անտոնելան և Մարիանան

ՆԿԱՐԸ՝ ՋՈՒԼՍՏԻՆ ՍՈՐՍՅԻՆ

հերթով ձայնագրում էին իրենց, մինչ խոսում էին Մորմոնի Գրքի պատմությունների մասին: Յուրաքանչյուր տեսանյութի վերջում նրանցից մեկը կիսվում էր դասից սովորած որևէ նյութով: Mamá and Papá (մայրիկն ու հայրիկը) օգնեցին նրանց տեսանյութ նկարել և տեղադրել համացանցում:

Սկզբում նրանք միշտ չէ, որ գիտեին, թե ինչ ասել: Սակայն, կարդալով սուրբ գրությունները և ավելին սովորելով դասերի մասին, նրանք հմտացան:

Մի կիրակի Անտոնելան և Մարիանան նստել էին համակարգչի դիմաց՝ մասնակցելու Երեխաների միության դասին: Այդ շաբաթվա դասը Մորմոնի Գրքի դեռահաս զինվորների մասին էր: «Դեռահաս զինվորներն ինչո՞ւ գնացին կռիվ»,- հարցրեց նրանց ուսուցիչը:

Մարիանան միացրեց իրենց բարձրախոսը: «Ես գիտեմ»,- ասաց նա: Նա և Անտոնելան անցած շաբաթ տեսանյութ էին պատրաստել այդ պատմության մասին: «Նրանց հայրերը խոստացել էին Աստծուն, որ չէին կռվելու, ուստի որդիները գնացին նրանց փոխարեն»:

Անտոնելան գլխով արեց: «Եվ նրանց մայրերն ուսուցանել էին իրենց, որ եթե նրանք հավատք ունենային, Աստված ապահովության մեջ կպահեր նրանց»: Նա ժպտաց Մարիանային: Սուրբ գրությունների համատեղ ուսումնասիրությունը զվարճալի էր:

Այդ երեկո ընթրիքի ժամանակ Mamá (մայրիկը) հարցրեց. «Ինչպե՞ս անցավ Երեխաների միության դասը»:

«Լավ»,- ասաց Անտոնելան: «Տեսանյութեր պատրաստելն օգնում է ինձ շատ ավելին սովորել սուրբ գրությունների մասին»:

«Ինձ նույնպես»,- ասաց Մարիանան: «Ես կարողանում եմ շատ հարցերի պատասխանել Երեխաների միության դասի ժամանակ: Եվ մենք ավելի լավ գիտենք սուրբ գրությունների պատմությունները»:

«Ուրախ եմ, որ տեսանյութերն օգնել են ձեզ»,- ասաց Papá (հայրիկը): «Կարծում եմ, դրանք օգնել են նաև շատ ուրիշներին»:

«Ճիշտ է»,- ասաց Mamá (մայրիկը): «Ձեր սովորածով և ավետարանի վերաբերյալ ձեր զգացմունքներով կիսվելը ծառայելու հրաշալի եղանակ է»:

Մարիանան ժպտաց: «Ես ուրախ եմ, որ մենք կարող ենք այդ եղանակով ծառայել»,- ասաց նա: Ապա նա դիմեց Անտոնելային . «Արի սկսենք ծրագրել հաջորդ շաբաթվա տեսանյութը»: ●

Այս պատմությունը տեղի է ունեցել Կանադայում: